



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.4

Հ-11

Եւ թոյր յերկրների, միայնք

ՀՐԱՅԱՆԳ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՆՊԱՍՏԸ ՀԻՄՆԱՐԿ-ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵԼՈՒ, ՎՃԱՐԵԼՈՒ ՅԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՍՈՑԱՊՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հրատարակութիւն ՀԽՍՀ Սոցալպահովա-
գութիւն Հանրապետական գանձարկի

368.4

Z-11 պ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ .

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱ-
ԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ ՀԻՄՆԱՐԿ-ՉԵՌ-
ՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՇՎԵԼՈՒ,
ՎՃԱՐԵԼՈՒ ՅԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՍՈՑԱԳՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑ-
ՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

Ա. Ինչ փաստաթղթով ե տրվում
ժամանակավոր անաշխատունա-
լիքի նպաստ.

1. Ժամանակավոր անաշխատու-
նակության նպաստ տրվում է բացա-
ռապես հիվանդանոցային թերթիկ-
ներով:

2. Հիվանդանոցային թերթիկներ
տալու իրավունք ունեն առողջապա-
հության և սոցապահության նախարար-
ության կողմից լիազորված բու-
ժող բժիշկները կամ բուժօգնական-

Ս. Ա. ՄԱՍՆԻՍԻՆ
Ս. Ա. ՄԱՍՆԻՍԻՆ

09 SEP 2013

44091

ըր: Հիվանդանոցային թերթիկները: Կիտի բուժող բժիշկներին կամ բուժհիմնարկներին կողմից նշված լինեն՝ թե ում ե տրված հիվանդանոցային թերթիկը, նրա հիվանդության դիագնոզը, աշխատանքից ազատելու տեվողությունը, հիվանդանոցային թերթիկի վերին մասում ընդգծված հիվանդության պատճառը և վերջապես ստորագրված բուժող բժշկի կողմից ու կնքված բուժհիմնարկի կնիքով:

3. Բուժող բժիշկներին կամ բուժհիմնարկներին կողմից 2-րդ կետում նշված ձևով լրացված հիվանդանոցային թերթիկները յենթակա յեն վճարման:

4. Հիվանդանոցային թերթիկները յերկու տեսակի յեն. առաջնակի և կրկնակի (առաջնակի թերթիկն ըստ իր ծավալի յերկու անգամ մեծ և կրկնակի թերթիկից): Յերր ապահո-

վագրավծն առաջին անգամ հիվանդանում և դիմում և բուժող բժշկին՝ նրան տրվում և առաջնակի հիվանդանոցային թերթիկ, վորով ել նա առաջին անգամ ստանում և յրեկ հասանելիք ժամանակավոր անաշխատունակության նպատար: Բայց հաճախ պատահում և, յերբ բուժումը դեռ չարունակելի յե լինում և բուժող բժիշկն ել առաջին հիվանդանոցային թերթիկի վրա նշանակած չի լինում, վոր ապահովագրվածը պիտի անցնի աշխատանքի, ահա այդ դեպքում հիմնարկ — ձեռնարկը առաջին թերթիկով վճարելով ապահովագրվածի հասանելիք ժամանակավոր անաշխատունակության նպատար, տալիս և նրան հիվանդանոցային թերթիկի չարունակությունը, վորը կոչվում և կրկնակի հիվանդանոցային թերթիկ: Հիվանդանոցային թերթիկի չարունակություն տալու ժամանակ, հիմնարկ — ձեռնարկը կրկնակի թերթիկի

վրա նշանակում է հիվանդի անուն-
ազգանունը, նշելով թե մինչե-
յիբրբ և բուժարարված: Հիվանդը բու-
ժող բժիշկին կամ բուժ հիմնարկին
ներկայանալու ժամանակ, ներկայա-
ցնում է հիվանդանոցային թերթիկի
չարունակությունը, վորի վրա բժիշ-
կը նշանակում է դիագնոզը և նորից
աշխատանքից ազատելու տեվտու-
թյունը: Հիվանդությունը յերկար
տեվելու պեպքում առաջնակի հիվան-
դանոցային թերթիկ տրվում է մեկ
անգամ, վորից հետո շարունակ տրը-
վում է կրկնակի հիվանդանոցային
թերթիկ: Հիվանդության նոր պեպք
տեղի ունենալու պեպքում, ելի առա-
ջին անգամ տրվում է առաջնակի հի-
վանդանոցային թերթիկ:

5. Առաջնակի հիվանդանոցային
թերթիկները հաշվով պահվում են
բուժող բժիշկների մոտ կամ բուժ-
հիմնարկներում, իսկ կրկնակի հի-
վանդանոցային թերթիկները հաշվով

պահվում են հիմնարկ— ձեռնարկնե-
րում: Չարաշահություններից խու-
սափելու համար անհրաժեշտ է հի-
վանդանոցային թերթիկները պահել
կողպեքի տակ մեկ անձի պատասխա-
նատվությամբ:

Բ. Ժամանակավոր Անաշխատու-
նակության նպաստը հաշվելու կարգը

6. Ժամանակավոր անաշխատունա-
կության նպատան ստանալու համար
ապահովահրվածք բուժող բժիշկից
կամ բուժհիմնարկից ստացած հի-
վանդանոցային թերթիկը ներկայաց-
նում է հիմնարկ— ձեռնարկի այն
հաշվային աշխատակցին, վորին
հունձնարարված է աշխատավարձ
դուրս գրել, հետեվապես և ժամանա-
կավոր անաշխատունակության նը-
պաստը հաշվել:

7. Ժամանակավոր անաշխատունա-
կության նպատար մեկ ամսվա համար
չի կարող դերագանցել Ֆերեվանում

180 ուուրլուց և Հայաստանի մյուս
վայրերում 150 ուուրլուց:

Յեթե ապահովագրվածն անաշխա-
տունակության ժամանակ գտնվում է
իր մշտական աշխատանքի վայրից
դուրս, կիրարկվում է նրա մշտական
աշխատանքի վայրի համար սահման-
ված առավելագույն չափը:

8. Ժամանակավոր անաշխատու-
նակության նպաստի որական դրույ-
քի լրիվ չափով, բայց վոչ ավելի ա-
ռավելագույնից, նպաստ վճարվում է
անաշխատունակության առաջին ո-
րից սկսած. —

ա) բոլոր այն ապահովագրվածնե-
րին, վորոնց անաշխատունակությու-
նը տեսվել է անընդհատ 15 օրից ա-
վելի:

բ) բոլոր այն ապահովագրվածնե-
րին, վորոնք անաշխատունակու-
թյունը կորցրել են հղիության ու ծննդ-
նընդարերության կամ աշխատանքի
խեղանդամության հետեվանքով:

գ) ընդհանուր առմամբ 3 տարվա
արտադրական ստաժ ունեցող բոլոր
արտադրական և յերկաթուղային ու
ջրային փոխադրության բանվոր-
ներին:

դ) 3 տարվա արտադրական ստաժ
ունեցող արտադրական և յերկաթու-
ղային ու ջրային փոխադրության
բանվորներին առաջ քաշվածներին,
յեթե առաջ քաշումը տեղի յե ունեցել
նպատակ համար գիմելուց վոչ ավելի
քան հինգ տարի առաջ:

յե) Այն անձանց, վորոնց սմասական
աշխատավարձը գերազանցում է Յե-
րեվանում 240 ուուրլուց և Հայաս-
տանի մյուս վայրերում 200 ուուր-
լուց:

Մնացած բոլոր դեպքերում նպաս-
տը լրիվ դրույքների չափով վճար-
վում է անաշխատունակության 6-րդ
օրից միայն, իսկ անաշխատունակու-
թյան առաջին 5 օրվա համար նպաստ

վճարվում է օրական դրույքի — ի
չափով:

9. Յերեք տարվա արտադրական
աշխատանքի ստաժի ապացույց կա-
րող են լինել թե ձեռնարկների կող-
մից արված տեղեկանքներն ու հաշ-
վեգրքույկները և թե արհմիություն-
ների տոմսերը:

Հիմնարկ — ձեռնարկությունը ժա-
մանակավոր անաշխատունակության
նպատակով վճարելու ժամանակ, պետք է
համաձայն ներկայացրած փաստա-
թղթերի, հիվանդանոցային թերթի-
կի վրա նշանակե արտադրական
ստաժի տեվողությունը, իսկ փաս-
տաթղթերը վերադարձնե ապահովու-
դրվածին:

10. Ժամանակավոր անաշխատու-
նակության նպատակը հաշվելու հա-
մար պիտի վերցնել ապահովագրվա-
ծի այն աշխատավարձը, վոր նա ու-
նեցել է ըստ վերջին աշխատանքի
(պաշտոնի) մինչ աշխատունակու-

թյունը կորցնելը: Աշխատավարձի
մեջ մտնում են ախանգագրված ին-
տրված այն բոլոր դումարները, վո-
րոնցից ապահովագրական մուծարք-
ներ են հաշվվում:

11. Նայած, թե ապահովագր-
վածը մինչ անաշխատունակությունը
վորքան ժամանակ է յեղել վերջին
աշխատանքում (պաշտոնում), ժա-
մանակավոր անաշխատունակության
նպատակի չափը վորքչիլիս հաշվի չե-
առնվում հետևյալ ժամանակների
փաստացի աշխատավարձը, վորին
ավելացվում է նաև նույն ժամանա-
կամիջոցում արված ժամանակավոր
անաշխատունակության նպատակի
դումարը:

ա) Յամսից պահատ աշխատածի
նկատմամբ հաշվի չեն առնվում Յ
ամսվա աշխատավարձն ու այդ նույն
ժամանակամիջոցում ստացած ժա-
մանակավոր անաշխատունակության
նպատակը:

բ) Յ ամսից պակաս, բայց վոչ պակաս մեկ ամսից աշխատածի նկատմամբ հաշվի յեն առնվում լրիվ մեկ կամ յերկու ամսվա աշխատավարձն ու այդ նույն ժամանակամիջոցում ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստը:

գ) մեկ ամսից պակաս և ամսակա-նով աշխատավարձ ստացողի նկատմամբ հիմք է ընդունվում նրա ամսական աշխատավարձը:

դ) մեկ ամսից պակաս և վոչ ամսականով աշխատավարձ ստացողի (գործարք, հատավարձ և այլն) նրկատմամբ աշխատանքում յեղած ամբողջ ժամանակամիջոցի համար ստացած փաստացի աշխատավարձը բաժանվում է աշխատած օրերի վրա և բազմապատկվում այն ամսվա բանվորական օրերի վրա, վորում նա անաշխատունակ է յեղել: Այս ձեվով ստացած գումարը, բայց վոչ ավելի ասպահովագրվածի տարիֆային մեկ

ու կես ամսվա դրույքից ընդունվում է վորպես նրա ամսական աշխատավարձը:

12. 11-րդ կետում նշված կարգը չի տարածվում կառուցող, բեռնակիր և ընդհանրապես այն բանվորների վրա, վորոնք ըստ իրենց աշխատանքի բնույթի սխառեմատիկաբար մեկ աշխատանքից անցնում են մի ուրիշ աշխատանքի: Սրանց նկատմամբ հիմք է ընդունվում նրանց փաստացի աշխատավարձը բոլոր աշխատանքներում մինչև անաշխատունակության օրը վերջին յերկու ամսվա ընթացքում, այլև այդ ժամանակամիջոցում ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստը:

13. ժամանակավոր անաշխատունակության նպաստի օրական չափը վորոշելու համար անհրաժեշտ է 11-րդ և 12-րդ կետերում նշված կարգով ստացված միջին ամսական աշխատավարձի գումարը բաժանել

տալյալ ապահովագրվածի անաչխատունակության ամսի բանվորական որերի վրա, վորը նրա տարիֆային դրույքից պակաս լինելու դեպքում, տրվում է տարիֆային դրույքի չափով:

14. Ժամանակավոր անաչխատունակության նպաստը տրվում է այն բանվորական որերի համար, վորոնց ընթացքում ապահովագրվածը չի աչխատել Ժամանակավոր անաչխատունակության հետևանքով:

Ժամանակավոր անաչխատունակության նպաստի չափը հաշվելն ավելի պարզ լինելու համար բավականանաք յերկու որինակով՝

ա) Հիվանդացողը ապահովագործ բանվոր է. հիվանդացել է դեկտեմբերին, աչխատանքից ազատված է 8/12 մինչև 21/12-ի ներառյալ ընդամենը 14 օրացույցային օր: Աչխատավարձ ստացել է սեպտեմբերին՝ 160 ռ. , հոկտեմբերին՝ 100 ռ. , և նոյեմ-

բերին՝ 150 ռ. , = ընդամենը 410 ռ. , հոկտեմբերին հիվանդության հետևանքով 70 ռուրլի յեւ Ժամանակավոր անաչխատունակության նպաստ է ըստացել, ընդամենը նրա 3-ամսվա աչխատավարձի գումարը կկազմի 480 ռուրլի , իսկ միջին ամսականը 160 ռուրլի (480 ռ. : 3-ի վրա) դեկտեմբերին այս բանվորը 6-հանգստի օրունի, հետևապես նա 25 բանվորական օր պիտի ունենար, վորի վրա յեւ պիտի բաժանել միջին ամսական աչխատավարձ 160 ռուրլին , կստացվի 6 ռ. 40 կ. , վորն էլ կլինի նպաստի օրական չափը: Դեկտեմբեր ամսվա ընթացքում այս ընկերոջ հանգստի օրերն են՝ 2, 7, 12, 17, 22, 27, հետևապես 8/12 մինչև 21/12 նա կունենա 2-հանգստի օր, կմնա 12 բանվորական օր, վորի համար պիտի վճարել 6 ռ. 40 կ. $\times 12 = 76 \text{ ռ. } 80 \text{ կ.}$: Բոլոր օրերի համար վճարվում է լրիվ, վորովհետև տվյալ ապահովագրվա-

ծը 3-տարվա արտադրական ստաժ-
ունի: Իսկ յեթե 3-տարվա արտադր-
ական ստաժ՝ չունենար կամ ծառա-
յող լինեք, պիտի առաջին 5-որվա
համար տրվեր որակյալ նպաստի
 $\frac{3}{4}$ -ի չափով. այդ դեպքում կատաց-
վեր:—

8/12—12/12, վորից մեկ որը հան-
դուտի որ է, 4-որվա համար հասնում
է 4 ա. 80 կ. $\times 4 = 19$ ա. 20 կ., իսկ
13/12—21/12, վորից նույնպես մեկ
որը հանդուտի որ է, 8-որվա համար
հասնում է 6 ա. 40 կ. $\times 8 = 51$ ա. 20
կ., ընդամենը 70 ա. 40 կ.: Յեթե 3-
տարվա արտադրական ստաժ չունե-
ցող բանվորի կամ ծառայողի անաշ-
խատունակությունը 15-որից ավել
տեղած լինեք, հենց առաջին որից սը-
րանց ել լրիվ կտրվեք:

բ) Հիվանդանոցը քարտաշ բանվոր
է. հիվանդացել է նոյեմբերին և աշ-
խատանքից ազատվել 3/11—24/11
ներառյալ = 22 օրացուցային օր. նրա

աշխատավարձն է սեպտեմբերին՝ 170
ռուբ. և հոկտեմբերին՝ —90 ռուբ.,
ընդամենը 260 ռուբլի: Հոկտեմբերին
աշխատանք չլինելու պատճառով
ամսվա բոլոր օրերն ել չի աշխատել:
Սրա միջին ամսական աշխատավարձը
կլինի 130 ռ., վորը պիտի բաժանել
նոյեմբեր ամսվա աշխատանքային
օրերի վրա, այս քարտաշը հանգստա-
նում է կիրակի օրերը—5 կուրակի
և 7-ը, 8-ը ու 29-ը նոյեմբերի, ըն-
դամենը 8 հանգստի օր, մնաց 22-
բանվորական օր, վորի վրա յեկ պիտի
բաժանել 130 ռուբլին, կատացվի ու-
րական 5 ա. 91 կոպ. 3/11—24/11 յե-
րեք կուրակի յե և յերկու տոն, ըն-
դամենը 5-հանգստի օր, կմնա 17
բանվորական օր, վորի համար ել պի-
տի վճարել 5 ա. 91 կոպ. $\times 17 = 100$
ռուբ. 47 կոպ.: Շինարարական բան-
վորներն ել են համարվում հավասա-
րեցված արտադրական բանվորներին
և հիվանդությունը 15-որից պակաս

անելու գեպքում, յեթե Յ-տարիա ստափ են ունենում, ժամանակավոր անաշխատունակության նպատակն անաջին որվանից ստանում են լրել չափով:

15. Ժամանակավոր անաշխատունակության նպատակ տրվում է այն բոլոր հիվանդանոցային թերթիկներով, վորոնք ներկայացվում են հիմնարկ-ձեռնարկներին հիվանդանոցային թերթիկ տրվելու որից հաջորդ մինչև 6-ամիսը, իսկ այդ ժամկետն ուշացնելու գեպքում, այդ թերթիկներով ժամանակավոր անաշխատունակության նպատակ չի տրվում:

9. Ժամանակավոր անաշխատունակության նպատակ վնարելու կարգը.


16. Ժամանակավոր անաշխատունակության նպատակ որակաւ չափը և վճարման յենթակա գումարը նշանակվում է հիվանդանոցային թերթիկի համապատասխան մասում: Չը-

պիտի մոռանալ, վոր հիվանդանոցային թերթիկի վրա պիտի նշանակված լինեն նաեւ այն անդեկությունները, վորը մինչև հիմա լրացնում է յին հիմնարկ-ձեռնարկները, այն է՝ յերեք, յերկու կամ մեկ ամսվա աշխատավարձը, տարիֆային գրույքը, հանդստի որը և յերեք ամսից պակաս աշխատանքի մեջ լինելու գեպքում, աշխատանքի ընդունվելու որը: Այդ անդեկություններն անհրաժեշտ են ստուգման համար, հետևապէս առանց այդ անդեկությունների հիվանդանոցային թերթիկները չեն ընդունվի սոցապմարմինների կողմից:

17. Ժամանակավոր անաշխատունակության նպատակ վճարումը կատարվում է աշխատավարձ վճարելու հետ միաժամանակ և գրա համար առանձին ցուցակ չի կազմվում, այլ կազմված ուժկանոցակում ամբողջովում և մեկ սյունայնքով, վորտեղ գրվում է վճարման յենթակա ժամա-

1454

1235257



նակաւոր անաշխատունակութեան
նպաստի դուժարը:

Ռոճկացուցակում ստորագրելուց
հետո այլևս ապահովագրված ից չի
պահանջվում ստորագրել նաև հիվան
դանոցային թերթիկի վրա, այլ հի-
վանդանոցային թերթիկները լրաց-
ված և վճարման յենթակա նպաստի
հաշվակցումն ել կատարված մար-
վում են հիմնարկ-ձեռնարկների կող-
մից, (հատուկ շտամպով և գանձա-
պահի ստորագրութեամբ), վորից հե-
տո հատուկ գրութեամբ ներկայաց-
վում են սոցապմարմիններին:

18. Ժամանակավոր անաշխատու-
նակութեան նպաստն առաջուց տրը-
վում է հետևյալ դեպքերում՝

ա) Հղիութեան ու ծննդաբերու-
թեան.

բ) Սանատորիա գնալու:

գ) Մասնագիտական բուժման դը-
նալու և

դ) Բուժույ բժշկի խորհուրդով այլ
վայր մեկնելու:

Դ. Հիվանդանոցային քերթիկները
սոցապմարմիններին ներկայացնելու
կարգը.

19. Հիվանդանոցային թերթիկնե-
րով վճարած ժամանակավոր անաշ-
խատունակութեան նպաստի դուժարն
անց է կացվում սոցապմարմինների
հաշվին և պահվում սոցապահովա-
գրութեան հերթական մուծումներից
անկախ այն հանգամանքից, թե ապ-
տոկոսները վճարվում են վորպես ա-
վանս, թե վորպես վերջնահաշիվ:

20. Աշխատավարձի վճարման ժամ-
կետից հաշված մինչև 3-որը հիմ-
նարկ-ձեռնարկները հատուկ հաշվե-
տվութեամբ (հաշվետվութեան ձևը
տես դրքի վերջում) ներկայացնում են
սոցապմարմիններին լրացված հի-
վանդանոցային թերթիկները:—Պե-
տական և տեղական բյուջեյով անց-
նող հիմնարկները, վորոնց ապտո-
կոսները գանձվում են կենտրոնաց-
ված ձևով Փինմարմինների միջոցով,

սոցապմարմիններին ներկայացվելիք
հաշվեալությունների պատճենները
ներկայացնում են Ֆինոպղկամառի
մարմիններին: Ֆինամարմինները հաա
կացումների Փոնդից սոցապմարմին-
ների ընթացիկ հաշվին հերթական
ապմուծանքների փոխանցումները
կատարելու ժամանակ ժամանակա-
վոր անաշխատունակության նպաստի
համար ծախսված գումարը հատկա-
ցումների Փոնդից փոխանցում են ի
վերականգնումն համապատասխան
վարկերի: Հաշվեալությունների վր-
առ ամեն անգամ պիտի նշված լինի
ապահովագրի №-ը: Սոցապմարմին-
ները հաշվեալությունն ստանալու
մասին ստորագրում են հաշվեալութ-
յան համապատասխան կորունի վրա
և վերագարձնում ապահովագրին:
Սոցապմարմինները հաշվեալութ-
յունն ստուգելուց հետո ընդունված
գումարն անց են կացնում ապահովա-
գրի հաշվին (պահանջում) փոքրեա

ստացված գումար ապատկոսների գի-
մաց: Սոցապմարմինների կողմից
չընդունված գումարի մասին հայտն-
վում է ապահովագրին, վերագարձ-
նելով չընդունված վաստաթղթերը
համապատասխան ուղղումներ կա-
տարելու համար: Այն դեպքում, յերբ
հիմնադր-ձեռնարկներն ավելի գու-
մար են վճարած լինում, քան իրեն-
ցից ապատկոսներ և հասնում,—սո-
ցապմարմինները հասանելիք ապատ-
կոսներից ավել վճարած գումարը
հաշվում են հետագա ամիսների ապ-
մուծանքների գիմաց:

21. Ժամանակավոր անաշխատու-
նակության նպաստի վճարումը հիմ-
նադր-ձեռնարկների կողմից չի կառույ
անդրադառնալ ապմուծանքների վը-
ճարման ժամկետների վրա և հասա-
նելիք ապմուծանքները պիտի մուծ-
վեն սոսմանված ժամկետներին, ներ-
կայացնելով նաև հաշվեալությունը
վճարած նպաստի գումարի մասին,

հալածողի դեպքում, կգանձվի տույ-
ժը ուշացրած որերի համար սահման-
ված կարգով:

22. Ապահովագրվածներին վճա-
րած ժամանակավոր անաշխատունա-
կության նպաստի դումարն անց է
կացվում բանվոր-ծառայողների տն-
նական հաշվին կամ հաշվեկրթույլի
մեջ վորպես վճարած նպաստ և այդ
մասին պահանջվելիք ամեն տեսակի
տեղեկանքներ տրվում են հիմնարկ-
ձեռնարկների կողմից:

23. Չվճարված հիվանդանոցային
թերթիկները վերադարձվում են սո-
ցիալական օգնությունների վճարման համար
ներկայացնելու որից հաշված վեց ա-
միսն անցնելուց հետո:

24. Միայն վճարումների հետևան-
քով ավել տրված դումարների նյու-
թական պատասխանատվությունն
ընկնում է հիմնարկ-ձեռնարկների
վրա և սոցիալական օգնություններին իրավունք
է վերադարձվում ավել վճարածը գան-

ձել անվիճելի հարկադրական կար-
գով:

25. Սոցիալական օգնություններին և նրանց
վերատուգիչ հանձնաժողովներին ի-
րավունք է վերադարձվում սոցիալական
և հետազոտման յենթարկել հիմնարկ-
ձեռնարկներում նպատակների վճար-
ման և հաշվառման ճշտությունն ու
դրվածքը, վորի համար հիմնարկ-
ձեռնարկները պարտավոր են տրա-
մադրել սոցիալական կամ հետազոտման
համար պահանջվող բոլոր նյութերը:

26. Հիմնարկ-ձեռնարկները պար-
տավոր են որենքների փոփոխություն-
ներին հետևելու համար ստանալ
«Աշխատանքի Տեղեկատու»-ն, վոր-
տեղ յույս կատենեն ժամանակավոր
անաշխատունակության նպաստի վը-
ճարման կանոնների բոլոր փոփոխ-
ությունները:

(Ապահովագրի անունը)
ԱՊԱՀ ՈՎԱԴՐԻ ԱՆՁՆ. ՀԱՇԻԿ. №

Հարակից ներկայացնում եմ հատ հիվանդություն թերթիկի, գումարով կ., վերաբերի գումարն անցկացրված եմ ձեր հաշվին

ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ստացված եմ բնորոշված եմ հիվանդ. թերթիկի գումարով
ա. կ. չեմ ընդունված հիվ. թերթիկի կ.

1931 թ.

ՀԱՇՎԱՊԱՀ՝

Գրանցված եմ

Ժուրնալ հոդվ. №

Աճճն. հաշ. №

1931 թ.

ՀԱՄԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂ

Աղ

№

1931 թ.

Սոցալմարմնի աշխատակից՝

Ապահովագրիկն.

Ստացված եմ Ձեր կից ըստ Ձեր №

գրություն չառն հիվ. թերթիկի ա.

կ

ՀՀ Ազգային գրադարան



NL0212745

15

44.031

ՀԱՅԳՈՒԻԴԲԱՃԻ ՏՊԱՐԱՆ

Պատվ. 1207, Տիւրմ 3000, Գրառեպ. 6102 (բ)